ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-037-26.06.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Հոդված 1, 2-րդ մաս	ՀՈԴՎԱԾ 1. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-258-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում՝ 2) 2-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «~~Հայաստանի Հանրապետության~~ Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը կամ ~~Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգով~~ վերացնել ռազմական դրությունը:».	Ընդունվել է:

	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Հոդված 3	Նախագծի 3-րդ հոդվածը հանել, քանի որ այն կրկնում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված համապատասխան դրույթները:	Ընդունվել է այլ խմբագրությամբ (Նշված մասի ձևակերպումները համատասխանեցնել Սահմանադրությանը):
2	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Հոդված 4, 2-րդ մաս	ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 8-րդ հոդվածի. 2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ. «2. ~~Հայաստանի Հանրապետության~~ Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով վերացնել ռազմական դրությունը կամ~~Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգով~~ չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:».	Ընդունվել է:
	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Հոդված 4, նոր մաս	3) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3-րդ մասով. «3. Ռազմական դրության ժամանակ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում եւ 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են սույն օրենքով	Ընդունվել է (Կամ էլ հանել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կ-034 նախագծից)

			սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:÷»:	
	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Հոդված 10, 2-րդ մաս	Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) 1-ին մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումն Ազգային ժողովի կողմից չեղյալ հայտարարվելու դեպքում ռազմական դրությունը դադարում է, իսկ առանձին միջոցառման իրականացումը չեղյալ հայտարարվելու դեպքում՝ դադարում է այդ միջոցառման հետագա իրականացումը:»:	Ընդունվել է այլ խմբագրությամբ («ռազմական դրությունը դադարում է իրավունքի ուժով:»)